ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-7/31-1

Ք. Երևան 06 հոկտեմբեր 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Բ. Թադևոսյան, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30** օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2 559 600 /երկու միլիոն հինգ հարյուր հիսունինը հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին: 1-ին չափաբաժինը հանդիսանում է հիմնական միջոց և առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետը պարտադիր է: Բոլոր ապրանքատեսակների համար, պայմանագրի կատարման /մատակարարում/ փուլում, համապատասխանության սերտիֆիկատի ներկայացումը պարտադիր է:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած քաղաքական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարածգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարածգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	**ք. Երևան, Արզումանյան32-10**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ» Հայաստան ՓԲԸ**
Հ/Հ 900011144079	**Հ/Հ 00218255800[illegible]**
ՀՎՀՀ 02522157	**ՀՎՀՀ 01210095**
ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ	**Տնօրեն**
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-7/31-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը	չ/մ
1.	Մածուցիկության որոշման ցածր ջերմաստիճանային թերմոստատ	Մածուցիկության որոշման ցածր ջերմաստիճանային թերմոստատ LOIP LT-912 Ցածր ջերմաստիճանային թերմոստատ (կրիոստատ) LT-912 նախատեսված է տարբեր նմուշների՝ մասնավորապես, նավթամթերքների ըստ փորձարկման ԳՕՍՏ 33-2000, ISO 3104, ASTM D 445-ի, -40°C-ից մինչև +100°C ջերմաստիճանում կինեմատիկ մածուցիկությունը որոշելիս ապակե մածուցիկաչափերի ջերմապահպանման համար: - Մածուցիկաչափի տակ տեղերի քանակը՝ 2 - Ջերմաստիճանի տիրույթը՝ -40-ից +100°C - Ջերմաստիճանի պահպանման ճշտությունը՝ ±0,01°C - Սահմանված ջերմաստիճանի հաստատման ճշտությունը՝ ±0,02°C - Աշխատանքային խորությունը՝ 300 մմ - Աշխատանքային հեղուկի ծավալը՝ 9,5 լ - Հզորությունը՝ 2900 Վտ - Ընդհանուր չափերը՝ 470x480x650 մմ Գործարանային փաթեթավորմամբ:	հատ
2.	Վիսկոզիմետր ՎՊԺ-4 0,82մմ	ԳՕՍՏ 10028-81 Հեղուկների մածուցիկությունը որոշելու համար Նյութը քիմիապես և ջերմակայուն ապակուց U-աձև որի ծնկում զոդված է մազանոթ Մակնշումը՝ վիսկոզիմետրի վրա հստակ գրառված է գործարանային համարը և մազանոթի տրամագիծը Յուրաքանչյուր վիսկոզիմետր ունի իր անձնագիրը, որտեղ նշված է նրա գործարանային համարը, մազանոթի **տրամագիծը 0,82 մմ** և հաստատուն գործակիցը (K): Վիսկոզիմետրերը ստուգաչափված են: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 10028-81-ի:	հատ
3.	Վիսկոզիմետր ՎՊԺ-4 1.12մմ	ԳՕՍՏ 10028-81 Հեղուկների մածուցիկությունը որոշելու համար Նյութը քիմիապես և ջերմակայուն ապակուց U-աձև որի ծնկում զոդված է մազանոթ Մակնշումը՝ վիսկոզիմետրի վրա հստակ գրառված է գործարանային համարը և մազանոթի տրամագիծը Յուրաքանչյուր վիսկոզիմետր ունի իր անձնագիրը որտեղ նշված է նրա գործարանային համարը, մազանոթի **տրամագիծը 1.12 մմ** և հաստատուն գործակիցը (K): Վիսկոզիմետրերը ստուգաչափված են: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 10028-81-ի:	հատ
4.	Վիսկոզիմետր ՎՊԺ-4 1.47մմ	ԳՕՍՏ 10028-81 Հեղուկների մածուցիկությունը որոշելու համար Նյութը քիմիապես և ջերմակայուն ապակուց U-աձև որի ծնկում զոդված է մազանոթ Մակնշումը՝ վիսկոզիմետրի վրա հստակ գրառված է գործարանային համարը և մազանոթի տրամագիծը Յուրաքանչյուր վիսկոզիմետր ունի իր անձնագիրը որտեղ նշված է նրա գործարանային համարը, մազանոթի **տրամագիծը 1.47 մմ** և հաստատուն գործակիցը (K):	հատ
5.	Վիսկոզիմետր ՎՊԺ-4 2.0մմ	ԳՕՍՏ 10028-81 ԳՕՍՏ 10028-81 Հեղուկների մածուցիկությունը որոշելու համար Նյութը քիմիապես և ջերմակայուն ապակուց U-աձև որի ծնկում զոդված է մազանոթ Մակնշումը՝ վիսկոզիմետրի վրա հստակ գրառված է գործարանային համարը և մազանոթի տրամագիծը Յուրաքանչյուր վիսկոզիմետր ունի իր անձնագիրը որտեղ նշված է նրա գործարանային համարը, մազանոթի **տրամագիծը 2.00 մմ** և հաստատուն գործակիցը (K): Վիսկոզիմետրերը ստուգաչափված են: Փաթեթավորումը և մակնշումը՝ համաձայն ԳՕՍՏ 10028-81-ի:	հատ
6.	Արեոմետր 0.910 – 0.990	ԳՕՍՏ 18481-81 մակնիշը АНЕ-2 Նավթամթերքների խտության չափման համար Խտության չափման միջակայքը՝ 0.910-0.990գ/սմ³ կամ 910-990 կգ/մ³	հատ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը	չ/մ
		- ցուցմունքի միջակայքը՝0. 080 գ/սմ³ կամ 80 կգ/մ³ - սանդղակի բաժանման միավորը՝ 0.001 գ/սմ³ կամ 1 կգ/մ³ - հիմնական թույլատրելի շեղման սահմանը՝ ±0.5 գ/սմ³ - ջեմաստիճանի չափման միջակայքը՝ մինուս 20⁰C մինչև պլյուս 35⁰C - ջերմաչափի սանդղակի բաժանման միջակայքը՝ 1⁰C - ջերմաչափի թույլատրելի շեղման սահմանը՝ ±0.5 ⁰C Մակնշումը - Արեոմետրի սանդղակիվրա կամ ներսում առանձին թղթե ժապավենի վրա գրված է - անվանումը կամ տիպը - համարը ըստ արտադրող ձեռնարկության համարակալման - սույն ստանդարտի համարը - ջեմաստիճանը, որի համար չափաբերված է արեոմետրը - խտության միավորը Փաթեթավորումը – թղթե պատյան փափուկ ներդիրով: Պատյանի վրա է գրված է արեոմետրի տիպը, արտադրող ձեռնարկության ապրանքային նշանը, չափման սահմանը, պետ. ռեեստրի նշանը:	
7.	Արեոմետր 1.0 – 1.08	ԳՕՍՏ 18481-81 մակնիշը ԱՕՆ-2 Նավթամթերքների խտության չափման համար Խտության չափման միջակայքը՝ 1.0-1.08գ/սմ³ կամ 1000-1080 կգ/մ³ - ցուցմունքի միջակայքը՝0.0 80 գ/սմ³ կամ 80 կգ/մ³ - սանդղակի բաժանման միավորը՝ 0.001 գ/սմ³ կամ 1 կգ/մ³ - հիմնական թույլատրելի շեղման սահմանը՝ ±0.5 գ/սմ³ Մակնշումը - Արեոմետրի սանդղակի վրա կամ ներսում առանձին թղթե ժապավենի վրա գրված է - անվանումը կամ տիպը - համարը ըստ արտադրող ձեռնարկության համարակալման - սույն ստանդարտի համարը - ջեմաստիճանը, որի համար չափաբերված է արեոմետրը - խտության միավորը Փաթեթավորումը – թղթե պատյան փափուկ ներդիրով: Պատյանի վրա է գրված է արեոմետրի տիպը, արտադրող ձեռնարկության ապրանքային նշանը, չափման սահմանը, պետ. ռեեստրի նշանը: Փաթեթավորվում է ստվարաթղթե արկղում: Խմբաքանակի արկղի վրա գրված է նշաններ՝ <<Զգուշանալ, փշրվող>>:	հատ
8.	Արեոմետր 1.08 – 1.16	ԳՕՍՏ 18481-81 մակնիշը ԱՕՆ-2 Նավթամթերքների խտության չափման համար Խտության չափման միջակայքը՝ 1.08-1.16գ/սմ³ կամ 1080-1160 կգ/մ³ - ցուցմունքի միջակայքը՝ 0.080 գ/սմ³ կամ 80 կգ/մ³ - սանդղակի բաժանման միավորը՝0.001 գ/սմ³ կամ 1 կգ/մ³ - հիմնական թույլատրելի շեղման սահմանը՝ ±0.5 գ/սմ³ Մակնշումը - Արեոմետրի սանդղակիվրա կամ ներսում առանձին թղթե ժապավենի վրա գրված է - անվանումը կամ տիպը - համարը ըստ արտադրող ձեռնարկության համարակալման - սույն ստանդարտի համարը - ջեմաստիճանը, որի համար չափաբերված է արեոմետրը - խտության միավորը	հատ

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական հատկանիշը	չ/մ
		Փաթեթավորումը – թղթե պատյան փափուկ ներդիրով: Պատյանի վրա է գրված է արեոմետրի տիպը, արտադրող ձեռնարկության ապրանքային նշանը, չափման սահմանը, պետ. ռեեստրի նշանը: Փաթեթավորվում է ստվարաթղթե արկղում: Խմբաքանակի արկղի վրա գրված է նշաններ՝ ՝ <<Զգուշաանալ, փշրվող>>:	
9.	Հիդրոմետր	ԳՕՍՏ 18481-81 մակնիշը ԱԵԳ Արեոմետր-հիդրոմետր Էթիլենգլիկոլի կոնցենտրացիայի չափման համար - չափման միջակայքը մասնաբաժինը՝ 20-100% - ցուցմունքի միջակայքը մասնաբաժինը՝ 80% - սանդղակի բաժանման միավորը մասնաբաժինը՝ 2% - հիմնական թույլատրելի շեղման սահմանը մասնաբաժինը՝ 1% - ջեմաստիճանի չափման միջակայքը՝ մինուս 20°C մինչև պլյուս 40°C - ջերմաչափի սանդղակի բաժանման միջակայքը՝ 2°C - ջերմաչափի թույլատրելի շեղման սահմանը՝ 1°C Մակնշումը - Հիդրոմետրի սանդղակիվրա կամ Հիդրոմետրի ներսում առանձին թղթե ժապավենի վրա գրված է - անվանումը կամ տիպը - համարը ըստ արտադրող ձեռնարկության համարակալման - սույն ստանդարտի համարը - ջեմաստիճանը, որի համար չափաբերված է հիդրոմետրը - խտության միավորը Փաթեթավորումը – թղթե պատյան փափուկ ներդիրով: Պատյանի վրա է գրված է արեոմետրի տիպը, արտադրող ձեռնարկության ապրանքային նշանը, չափման սահմանը, պետ. ռեեստրի նշանը: Փաթեթավորվում է ստվարաթղթե արկղում: Խմբաքանակի արկղի վրա գրված է նշաններ՝ ՝ <<Զգուշաանալ, փշրվող>>:	հատ

Ծանոթություն

1. Ապրանքների ընդունումն իրականացվելու է արտադրող գործարանի որակի սերտիֆիկատի առկայության դեպքում:
2. 1-ին չափաբաժնի ապրանքները հանդիսանում են հիմնական միջոց, ուստի դրանց պարտադիր երաշխիքային ժամկետը՝ ոչ պակաս 1 տարի:
3. Ապրանքների ձեռք բերման անհրաժեշտ պայման է դրանց չօգտագործված լինելը:
4. Մատակարարման վայրը ՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Կարմիր բանակայինների փողոց:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումները	Չ/մ	Ամբողջ քանակը (ծավալը)	Մեկ միավորի գինը (ՀՀ դրամով)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամով)	Գնման ժամանակացույցն ըստ 2018թ. եռամսյակների
						III եռ.
1.	ընկղման կայունաջերմոց (թերմոստատ) /Մածուցիկության որոշման ցածր ջերմաստիճանային թերմոստատ LOIP LT-912/	հատ	1	1 497 600	1 497 600	1
2.	մածուցիկության չափիչներ /Վիսկոզիմետր ՎՊԺ-4 0,82մմ/	հատ	10	16 200	162 000	10
3.	մածուցիկության չափիչներ /Վիսկոզիմետր ՎՊԺ-4 1,12մմ/	հատ	10	16 200	162 000	10
4.	մածուցիկության չափիչներ /Վիսկոզիմետր ՎՊԺ-4 1,47մմ/	հատ	10	16 200	162 000	10
5.	մածուցիկության չափիչներ /Վիսկոզիմետր ՎՊԺ-4 2,0 մմ/	հատ	10	16 200	162 000	10
6.	արեոմետրեր /Արեոմետր 0,910-0,990/	հատ	10	5400	54 000	10
7.	արեոմետրեր /Արեոմետր 1,0-1,08/	հատ	10	5400	54 000	10
8.	արեոմետրեր /Արեոմետր 1,08-1,16/	հատ	10	5400	54 000	10
9.	արեոմետրեր /Հիդրոմետր/	հատ	50	5040	252 000	50

Հավելված N 2
2018թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-7/31-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում՝ (տոկոսներով)					
			Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ
1.	ընկղման կայունաջերմոց (թերմոստատ) /Մածուցիկության որոշման ցածր ջերմաստիճանային թերմոստատ LOIP LT-912/	42941160/1/10/2	1 497 600	1 497 600	1 497 600	1 497 600	1 497 600	1 497 600
2.	մածուցիկության չափիչներ /Վիսկոզիմետր ՎՊԺ-4 0,82մմ/	38421190/2/10/2	162 000	162 000	162 000	162 000	162 000	162 000
3.	մածուցիկության չափիչներ /Վիսկոզիմետր ՎՊԺ-4 1,12մմ/	38421190/3/10/2	162 000	162 000	162 000	162 000	162 000	162 000
4.	մածուցիկության չափիչներ /Վիսկոզիմետր ՎՊԺ-4 1,47մմ/	38421190/4/10/2	162 000	162 000	162 000	162 000	162 000	162 000
5.	մածուցիկության չափիչներ /Վիսկոզիմետր ՎՊԺ-4 2,0 մմ/	38421190/5/10/2	162 000	162 000	162 000	162 000	162 000	162 000
6.	արեոմետրեր /Արեոմետր 0,910-0,990/	38411100/5/10/2	54 000	54 000	54 000	54 000	54 000	54 000
7.	արեոմետրեր /Արեոմետր 1,0-1,08/	38411100/6/10/2	54 000	54 000	54 000	54 000	54 000	54 000
8.	արեոմետրեր /Արեոմետր 1,08-1,16/	38411100/7/10/2	54 000	54 000	54 000	54 000	54 000	54 000
9.	արեոմետրեր /Հիդրոմետր/	38411100/8/10/2	252 000	252 000	252 000	252 000	252 000	252 000

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
Տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
2018 թ. կնքված
«ՁՀԱՊՁԲ-7/31-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
2018 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-7/31-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____ պայմանագրի համարը
պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն